ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը փետրվարի 1-ին, ուրբաթ օրը, ժամանեց Լենինական, ընկերակցությամբ Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, պատարագելու և բանին կենաց քարոզությամբ հոգեպես մխիթարելու հավատացյալներին։

Փետրվարի 2-ին, շաբաթ օրը, երեկոյան, Տ. Դերենիկ սրբազանը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Աստվածածին եկեղեցին՝ նախագահելու կիրակամուտի ժամասացության և քարոզելու։ Թեմի առաջնորդական տեղապահ բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը քահանայական դասի և հավատացյալների անունից բարի գալստի և ողջույնի ջերմ ու անկեղծ խոսք ասաց Դերենիկ սրբազանին։

Հավարտ երեկոյան ժամերգության Դերենիկ սրբազանը քարոզեց «Համբարձի զաչս իմ ի լերինս ուստի եկեսցէ ինձ օգնութիւն» *բնաբանով։ Սրբազանը դիտել տվեց, որ լեռներն այն խարսխահաստատ ամրություններն են, որոնց մարդիկ միշտ նայել են իբրև իրենց ապաստանն ու ապավենը։ Բայց լեռներից այն կողմ, ավելի վերևում, մարդու բուն ապավենը Աստված է, որ «արար զերկինս և զերկիր»։ Աստուծուց է, որ գալիս է ճշմարիտ օգնությունը հավատացյալներին։ Հայ ժողովրդի ապավենն ու փրկությունը միշտ եղել է Աստված, որին նա ջերմորեն աղոթել է և հավատացել, որ բոլոր օգնությունները, բարի տուրքերն ու կատարյալ պարգևները Նրանից են գալիս։*

Փետրվարի 3-ին, կիրակի օրը, Դերենիկ եպիսկոպոսը Ս. Աստվածածին եկեղեցում մատուցեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Եկեղեցին լցվել էր հավատացյալների հոծ բազմությամբ։ Բարեպաշտ հասարակությունը եկել էր եկեղեցի սրբազան հոր պատարագին ներկա գտնվելու և ունկնդրելու նրա քարոզը։

Պատարագի ընթացքում սրբազանը կատարեց շնորհաբաշխություն. ուրարակիր Կարապետ Քելամյանը ձեռնադրվեց սարկավագ։ Լենինականի եկեղեցու երգչախումբը Տ. Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ հրաշալի կերպով կատարեց քառաձայն պատարագի երգեցողությունը։

Պատարագի միջոցին սրբազանը քարոզեց «Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեան» *բնաբանով։ Բացատրեց Աթոռ բառի իմաստը, որ այս դեպքում Հայոց Եկեղեցու հայրապետական իշխանությունն իսկ է։ Ցույց տվեց, թե ինչպես այդ իշխանությունը, դարերի ընթացքում, զգոն արթնամտությամբ և իմաստությամբ ղեկավարել է Հայաստանյայց Ս. Եկեղեցին և մեր ժողովուրդը։ «Հայի գոյատևման յուրաքանչյուր նշմարն ու նշխարը անճառելի կապով զուգորդված է այդ իշխանության հետ»,— ասաց սրբազանը և մաղթեց, որ նա մնա միշտ անսասան՝ առաջնորդելու իր հոտը ճշմարիտ կյանքին՝ Աստուծո։*

Պատարագի ավարտման հավատացյալ ժողովուրդը, գոհ և սփոփված, մոտեցավ սրբազանի աջը համբուրելու և ստանալու նրա

օրհնությունը։ Այնուհետև Դերենիկ եպիսկոպոսը վերադարձավ ավանդատուն, որտեղ նրան էին սպասում երգչախմբի անդամները։ Սրբազանը «Պահպանիչ»-ով իր օրհնությունը տվեց նորակազմ խմբին և իր շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնեց հաջող երգեցողության համար։

Սուրբ պատարագից հետո Տ. Դերենիկ եպիսկոպոսը, Տ. Կոմիտաս և Տ. Եղիշե վարդապետների ընկերակցությամբ, այցելեց Լենինականի տեսարժան վայրերը։ Նրանք եղան նաև Արագածի լանջերում։

Կիրակի, երեկոյան ժամերգությունից հետո, սրբազանը դարձյալ քարոզեց հետևյալ բնաբանի շուրջ. «Փա՜ռք Քեզ, Աստուած, Փա՜ռք Քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, Փա՜ռք Քեզ»։ Ոսկեբերան եռամեծ վարդապետի աղոթքն է այս, ասաց քարոզիչ սրբազանը, ապա իր խոսքի մեջ ծանրացավ այն գաղափարի վրա, թե անհատապես կամ ազգովին փառք և գոհություն պետք է տանք Աստուծո՝ մեր կյանքի բոլոր հանգրվաններին, ուրախության թե կսկիծի մեջ, երջանկության թե տառապանքի, հարստության թե աղքատության մեջ։ Գոհանալ պարտինք հանապազ Աստուծուց և փառք տալ Նրան։ Այսպիսով է, որ կարող ենք գտնել հոգեկան երջանկություն։

Երկուշաբթի օրը գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը հրաժեշտ տվեց Շիրակի թեմին և մեկնեց լավագույն տպավորություններով։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆԸ ԲԱՔՎՈՒՄ

Փետրվարի 22-ին գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, որը հյուրաբար գտնվում էր Մայր Աթոռում, Ս. Ծննդյան տոների կապակցությամբ, հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռի միաբանությունից։

Դերենիկ սրբազանը, իր վերադարձի ճանապարհի վրա, այցելեց նաև Ադրբեջանի մայրաքաղաք գեղեցիկ Բաքուն, ընկերակցությամբ Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի։

Ադրբեջանի և Թուրքեստանի միացյալ թեմը մեր հայաշատ թեմերից է, որտեղ գովելի աշխատանք է կատարում առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, գործակից ունենալով կյանքի և աշխատանքի փորձով հարուստ արժանապատիվ քահանա հայրերին և թեմական խորհրդի հավատավոր ու նվիրված անդամներին։ Մեր գնացքը, կտրելով հայրենի ձյունածածկ և-ընդարձակ դաշտերը, Արարատի փեշերով-ու Մայր Արաքսի ափերով փետրվարի 23-ին, շաբաթ օրը հասավ Բաքու։ Գերաշնորհ սրբազանին դիմավորելու համար կայարան էին եկել, առաջնորդական փոխանորդ Տ. Տիրայր վարդապետի գլխավորությամբ, մայրաքաղաքի քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները, եկեղեցու քառաձայն երգչախմբի անդամները և բազմաթիվ հավատացյալներ։ Սրբազանը առաջնորդվեց Բաքվի Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր հավաքված էր հավատացյալների մի մեծ բազմություն, և ուր սրբազանը մուտք գործեց «Հրաշափառ»-ով։ Այդ սրբազանին բարի գալուստի խոսք ասաց հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը։

Ի պատասխան հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի բարի գալուստի խոսքերին, գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար, ապա քարոզեց «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, Ի տուն Տեառն երթիցուք մեք» Սաղմոսից վերցրած բնաբանով։ «Սրտեռանդն ուրախ եմ Նորին Ս. Օծության Վազգեն Կաթողիկոսի կարգադրությամբ ըլլալու Բաքվի հայ ժողովրդին և հայ եկեղեցվույն մեջ— ասաց քարոզիչ սրբազանը։— Ուրախ եմ մանավանդ, որ հոս ունիք ժրաջան երիտասարդ առաջնորդական փոխանորդ, քահանա հայրեր և եկեղեցական խորհուրդ, որոնք փոխադարձ հասկացողությամբ և սիրով նվիրված են սույն եկեղեցվո և հոտի պայծառության։ Մեր «Տուն Տեառն»-ը Հայոց Մայրենի Ս. Եկեղեցին է։ Բոլոր հայերը, ամենուրեք և միշտ, ուրախ ըլլալու են մտնելով անոր սեմեն ներս։ Այդ ուրախությունը կհանդիսանա ճշմարիտ ուրախություն այն ժամանակ, երբ հավատարիմ գտնվինք մեր Ս. Եկեղեցվո ծեսին և ավանդությանց, հավատքին և դավանության»։ Սրբազանի այս շինիչ քարոզից հետո պաշտվեց Երեկոյան ժամերգությունը։

Փետրվարի 24-ին, կիրակի, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Դերենիկ սրբազանը։ Եկեղեցին լիքն էր հավատացյալ ժողովրդի բազմությամբ։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց պատարագիչ սրբազանը «Եթէ ոք ի ծարաւի իցէ. եկեսցէ առ իս և արբցէ» բնաբանով։ Սրբազանը բացատրեց, թե Քրիստոս աղբյուրն է կյանքի և կենդանի ջուրը բոլոր ծարավի հոգիներին։ «Եթե նյութիղեն ջուրը կհանգչեցնե ծարավի մարմինները, հապա որքա՜ն անասելիորեն առավել ևս Քրիստոս, որ իսկ և իսկ ակնաղբյուրն է կյանքի»։ Սրբազանը շեշտեց այն հանգամանքը,